համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով պետական տուրքի գումարին, և նկատի ունենալով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքը, հայցը ենթակա է բավարարման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի գումարը պետք է բռնագանձել պատասխանողից հօգուտ հայցվորի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

«Ավետիսյան Լեգալ Քոնսալթինգ» ՍՊ ընկերության՝ որպես կատարող, և «ԱՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության՝ ոպես պատվիրատու, մջև 08.05.2024թ. կնքված հանձնարարության թիվ 08/24 պայմանագրի համաձայն՝ կատարողը պարտավորվել է պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել պայմանագրի իրավաբանական ծառայությունները, իսկ պատվիրատուն պարտավորվել է վճարել մատուցված իրավաբանական ծառայությունների դիմաց, որը կազմում է՝ 300.000 ՀՀ դրամ:

Տվյալ դեպքում, փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը /ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը/, գործի բարդությունը:

Վերոնշյալ պատճառաբանությամբ, գործով փաստաբանի խելամիտ վարձատրության գումար է հանդիսանում 150.000 ՀՀ դրամը, ուստի այդ գումարը պետք է բռնագանձել պատասխանողից հօգուտ հայցվորի:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 105-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել:

Անվավեր ճանաչել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության կողմից

հայտարարված թիվ ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-24/28 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի՝ 06.05.2024թ. հայցվոր «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և հայտը մերժելու մասին որոշումը:

Պատասխանող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունից հօգուտ հայցվոր «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության բռնագանձել 35.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Պատասխանող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունից հօգուտ հայցվոր «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Դատավոր՝ **Գայանե Մազմանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am